բարում «Էպլէանո» բառը թողնուած է անփոփոխ որ կը նշանակէ մարդաձուկ, սիւպիաձուկ (sepia)—(էջ 164.)

—«Զի զգուռն երկաթի և զնիգս պղնձի ի բաց խլեսցէ» թարգմանելիս, նէգ բառը չէ թարգմանուած։

Համառօտակի թուենք այն բառերը, որ արժ. թարգմանիչը կամ չէ թարգմանել թողնելով գրաբարը, կամ սխալ է թարգմանել, օրինակ՝

Հարկանող—թարգմանուած է—խայթող—որ կը նշանակէ—զարնող, ծեծող. (էջ 5.)

Մանկունք » մանկունքները » մանուկները (էջ 6)

Առատ » բարի » առատ, առատաձեռն. (էջ 28)

Ժամանել » արժանանալ » հասնել (էջ 43)

Մի ըստմիոջէ » միըստմիոջէ » մինը միւսի յետևից (էջ 99)

Գոռ » խրոխտանալ » ահռելի, զորաւոր (էջ 118)

Տարմ » տարմ » երամ, խումբ (էջ 123)

Տխուր » չար » տխուր (էջ 124)

Յղփութիւն » յղութիւն » հարստութիւն, ճոխութիւն (էջ 139)

Հ. թարգմանիչը յիշատակարանը թարգմանելիս, (ընդարձ էջ 117 տողն) «... երազքնթաց շարժմամբ ճանապարհն ճեպէր ի կիսազունդն անստուեր, զերկիր ընդ ինքեամբ ունելով» տողերն ամբողջովին դուրս է ձգել մեզ անյայտ պատճառով Լաստիվերտցու— պապմոՐՒ-ՆՒՑ յէՊոյ տեղաւորուած է (թարգմանչի) «ծանօթութիւնները», որ թէև համառօտ, բայց գեղեցիկ կերպով ընթերցողներին ծանօթացնում է գրքոյկի մէջ յիշուած զանազան յատուկ անունների հետ։ (137 ծանօթութիւն) ինչպէս քաղաքների, լեռների, գետերի մարդկանց և այլն։

Ուրիշ բան է մի որ և է լեզուից մի վէպ, մի յօդուած թարգմանել, ուրիշ է մի պատմական գրուածքի նիւթն ամբողջապէս գրաբարից աշխարհաբար թարգմանել. վերջին դէպքում պէտք է աշխատել ոչ բան աւելացնել, ոչ պակսեցնել, այլ թողնել անփոփոխ բընագրի հոգու համեմատ թարգմանել և լիակատար։

Վերջացնում ենք մեր ակնարկը Հ. Մինասեանի թարգմանութեան վերաբերմամբ։ Կարծում ենք անաչառ կերպով մի քանի նկատողութիւններ անելը ոչ թէ վնասակար, այլ շատ օգտակար է ամեն մի նոր լոյս տեսած գրքի, որի պակասութիւնը իրանից առաջ զգալի է եղել։

ԳՕՇ.

ԱԶԳԱՅԻՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

Նոցին Կայսերական Մեծութեան պսակադրութեան առթիւ, ամսոյս 20-ին կատարուեցաւ հանդիսաւոր մաղթանք Ս. Իջման Սեղանի առաջ ի ներկայութեան Վեհափառ Հայրապետի, համադումար միաբանութեան և խուռն բազմութեան ժողովրդի։ Այս առթիւ շնորհաւորական հեռագիրների պատասխաններն են.

—

Բարձրագոյն պատասխան

ԷՋՄԻԱԾԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ողջոյն եկեղեցւոյն Հայաստանեայց և համայն բարեպաշտ Ազգին Հայոց, որով հայցեալ է զօրհնութիւն Աստուծոյ ի վերայ նորոյ ամուսնական կենաց Մերոց և գործոյ թագաւորութեանս, ուրախ ա-

բարին զսիրտ Մեր։ Յանձն արա-
բեալ զՄեզ աղօթիւ Ձերոց, շնոր-
հակալ եմք ի սիրտ և ի հոգի վասն
բարեմաղթութեանցդ։

Իսկականին ստորագրեալ է

ՆԻԿՈԼԱՅ

—

ՊԵՏԵՐԲՈՒԳ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ

Լցեալ զգացմամբ հպատակու-
թեան, պարտ անձին համարեցի
այսօր համայն միաբանական ուխ-
տիւս կատարել Ջերմեռանդ մաղ-
թանս առաջի Իշման Ս. Սեղանոյն
վասն ս. ամուսնական պսակադրու-
թեան Ձերդ Մեծութեանց, աղա-
չելով զբարձրեալն Աստուած, որ
թագաւորն է թագաւորաց, արար-
չագործ աջովն իւրով ի բարձանց
տեառնագրեալ օրհնեսցէ զՊսակն
Ձերդ Մեծութեանց, որպէս օրհ-
նեաց զպսակ նախաստեղծին Ադա-
մայ թագաւորին որ տիրէ արարա-
ծոց։ Աղօթեմք նաև զի Տէրն Տէ-
րանց օրհնեսցէ զԿայսերական գեր-
դաստուն ի բարգաւաճումն Ազգա-
յածին զաւակօք և զերկուս լծակից
ամօլոգ պահպանեսցէ խաղաղ, եր-
ջանիկ և երկար կենօք ի փառս և
ի բարօրութիւն Մեծին Ռուսիոյ և
յերջանկութիւն աշխարհաշէն մի-
լիոնաւոր հպատակաց։

Իսկականին ստորագրեալ է

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Բարձրագոյն պատասխան.

ԷՋՄԻԱԾԻՆ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի հոգի և ի սիրտ շնորհակալ եմ
յաղագս սիրալիր հեռագրոյ Ձերոյ։

Իսկականին ստորագրեալ է

ԳԷՕՐԳԻ

—

Անցեալ 26-ին Նորին Կայսերական Բարձ-
րութեան Թագաժառանգի անուանակոչու-
թեան առթիւ կատարուեցաւ հանդիսաւոր
մաղթանք Ս. Էջմիածնի Տաճարում ի ներկա-
յութեան համայն միաբանութեան և բազմա-
թիւ ժողովրդեան։ Ապա ուղարկուեցաւ հե-
տևեալ հեռագիրն.

—

ԼՈՒՍԹՈՒՄԸՆ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱԺԱՌԱՆԳԻՆ

Ի Մեծի աւուրս անուանակոչու-
թեան Ձերդ Կայսերական Բարձ-
րութեան ի տեղւոջ Իշման Որդւոյ
Միածնի և Մայր Տաճարի Ս. Ա-
թոռոյս, ցկնի Ս. պատարագի կա-
տարեցան հանդիսաւոր մաղթանք
վասն շնորհելոյ Ձերդ Կայսերական
Բարձրութեան աւուրս բարեբաս-
տիկս և երկարս։

Աղօթս ջերմագինս վեր առաքեմ
առ Աթոռ Բարձրելոյն զի պարգևեսցէ Տէր Ձերդ Կայսերական
Բարձրութեան զցանկալին առող-

Ջութիւն յուրախութիւն համայն Ռուսիոյ։

Յոսկականին ստորագրեալ է

ՄԿՐՏԻՉ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հոկտեմբ. 14-ին.

Ամսոյս 13-ին կիւրակէ օրը, ի յիշատակ թագման ի Տէր հանգուցեալ Կայսեր Ամենայն Ռուսաց ԱՂԵՔՍԱՆԴՐ Գ-ի Վեհափառ Հայրապետի հրամանով Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հանդիսաւոր պատարագ մատուցուեց և կատարուեցաւ հոգեհանգստի կարգը։ Այս տխուր հանդիսին ներկայ էին Վեհափառ Կաթուղիկոսը, ամբողջ միաբանութիւնը, ճեմարանի ուսուցչական խումբը և բոլոր աշակերտները, պաշտօնական և հրաւիրեալ անձինք և ժողովրդականների խուռն բազմութիւն։ Հոգեհանգստեան ժամանակ Վեհափառ Հայրապետը դառնալով դէպի ժողովուրդը հեռաւեալ խօսքերով մխիթարեց.—

«Մի վերջին պարտք ունիմք կատարելու, ափսոս որ շատ ուշ մնացինք, հանգուցեալ Կայսեր թաղման հանդէս կատարուած է ամսոյս եօթին, այն ինչ մեզ հաղորդուեց երկու երեք օր յետոյ։ Սորա համար ես մտածեցի, որ հանգուցեալ Կայսեր թաղման հանդէս կատարեմ կիրակի օր, որպէս զի Հայ ժողովրդեան մեծ բազմութիւն լինի Մայր Աթոռի Ս. Տաճարում. փառաւոր և հանդիսաւոր լինի արարողութիւն»։

«Կը ծանուցանեմ ձեզ ժողովուրդ Հայոց, այժմ պիտի կատարեմք վերջին հոգեհանգիստ, ուստի վերացէք հոգւով այնպէս, որպէս թէ հանգուցեալ Կայսեր դերեզմանին վերայ կեցած՝ աղօթում ենք ջերմեռանդ, և մեր աղօթք թէ վաղ լինի թէ անագան՝ իւր տեղ հասնում է. զի Աստուած մերձ է, և Նորա համար չկայ ժամանակի միջոց։ Բովանդակ մեծին Ռուսիոյ աշխարհ լացաւ անզուգական Կայսեր մահը. Արարատեան Մայր Աթոռն ևս իւր համայն ժողովրդով և միաբանական ուխտիւ պէտք է լայ մեր խաղաղասէր Կայսեր կորուստ։ Սողոմոն որ խաղաղութեան թագաւոր էր. զուցէ ժողովուրդ նորա համար կարծիք ունէր թէ անմահ է, չի մեռնիր. նա բացականչելով խոստովանեց թէ «Ե՛մ եմ և ես մարդ մահկանացու՝ ծնունդ հողածին Նախաստեղծին...»։

«Մի օր ծնաւ Աղէքսանդր և աւետեցին թէ —թագաժառանգ ծնաւ. մի օր թագ կապեցին և ասացին թէ—թագաւոր եղաւ՝ այսօր էլ ձայն գուժեց Լիվադիայէն թէ—Աղէքսանդր մեռաւ և թաղեցաւ։ Այսպէս թէ թագաւոր և թէ ժողովրդի զաւակ հաւասարապէս ենթակայ ենք մահուան. Օրհնեալ լինի Քրիստոս, որ խափանեց մահ, կը մեռնինք միայն մարմնով, այլ կենդանի կմնամք հաւատով»։

«Այսօր Մայր Աթոռ յատկապէս հոգւոյ ճաշ պատրաստած է, կը ծանուցանեմ ձեզ, նեղեալ, կարօտեալ, հայրենիքէն զրկուած զաղթականութեան թշուառ զաւակներ, որ եկեր էք պատսպարան ու հաց կը խնդրէք, հրամայեցէք ի սեղանատուն, կշտապինդ կերէք. օրհնեցէք հանգուցեալ Կայսեր յիշատակ. զի այս սեղանն ևս Նորա շնորհիւն է պատրաստուած։ Այո՛, անցեալ ձմեռ ես դիմեցի Նորին Կայսերական ողորմածութեան՝ դարման խնդրելու զաղթականաց և սովեալների համար, Նորին Կայսերական Մեծութիւն ամենայն վստահութեամբ և բարեսրտութեամբ հրամայեց և արաւնեց հանգանակութիւն անել Մեծին Ռուսիոյ Տէրութեան ամէն կողմեր. ի նպաստ սովելոց ամէն կողմերէն թափուեցան նըպաստները»։

«Անմոռանալի է Աղէքսանդր Գ. Կայսեր յիշատակ համայն ժողովրդոց համար, մանաւանդ մեզ՝ և մենք պարտաւոր ենք ի բոլոր սրտէ աղօթել Նորա համար։ Այժմ որ հոգեհան-